

Նպատակ 12: Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ

Պատասխանատու սպառում և արտադրություն նշանակում է խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու էներգաարդյունավետությունը, կայուն ենթակառուցվածքները, և ապահովել հիմնական ծառայություններից օգտվելու, «կանաչ» և արժանապատիվ աշխատանքի, կյանքի ավելի լավ որակի հնարավորություն բոլորի համար: Դրա իրագործումն օգնում է իրականացնել զարգացման ընդհանուր պլանները, նվազեցնել հետագա տնտեսական, բնապահպանական, սոցիալական ծախսերը, ամրապնդել տնտեսական մրցակցությունը և կրճատել աղբատությունը:

Պատասխանատու սպառումը և արտադրությունը նպատակ ունի «սակավ ռեսուրսներով անել ավելին և ավելի լավ», մեծացնել տնտեսական գործունեությունից ստացվող զուտ շահույթը՝ նվազեցնելով ռեսուրսների օգտագործումը, դեգրադացումը և աղտոտումը ողջ կենսափուլի ընթացքում՝ միաժամանակ բարելավելով կյանքի որակը: Այն ներառում է տարբեր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ գործարար հատված, սպառողներ, քաղաքական գործիչներ, հետազոտողներ, գիտնականներ, մանրածախ վաճառողներ, լրատվամիջոցներ և զարգացման ոլորտում համագործակցող գործակալություններ:

Այն նաև պահանջում է համակարգային մոտեցում և համագործակցություն առաջարկի շղթայում գործող դերակատարների շրջանում՝ արտադրողից մինչև վերջնական սպառող: Այն ենթադրում է սպառողների ներգրավվածություն՝ կայուն սպառման և ապրելակերպի մասին հանրային իրազեկման բարձրացման և կրթության միջոցով, չափանիշների և պիտակների միջոցով սպառողներին բավարար տեղեկատվությամբ ապահովում ու ներգրավվածություն կայուն պետական գնումներում և այլն:

ԻՆՉՈ՞ՒՄ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Եթե մինչ 2050 թ. համաշխարհային բնակչությունը հասնի 9,6 միլիարդի, ապա ներկայիս կենսակերպը պահպանելու համար անհրաժեշտ կլինի գրեթե երեք մոլորակներին համարժեք տարածք:

Ո՞րն է նպատակը

Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ:

Ինչո՞ւ

Սպասվում է, որ հաջորդ երկու տասնամյակներին ամբողջ աշխարհում ավելի շատ մարդիկ կանցնեն միջին դասի շարքերը: Սա լավ է անհատական բարգավաճման համար, սակայն կմեծացնի արդեն իսկ սահմանափակ բնական ռեսուրսների պահանջը: Եթե մենք քայլեր չձեռնարկենք՝ փոխելու սպառման և արտադրության մեր մոդելները, ապա անդառնալի վնաս կհասցնենք մեր շրջակա միջավայրին:

Որո՞նք են փոփոխման կարիք ունեցող ներկայիս սպառման և արտադրության մոդելները

Գոյություն ունեն սպառման բազմաթիվ ասպեկտներ, որոնք, պարզ փոփոխությունների դեպքում, կարող են մեծ ազդեցություն ունենալ ամբողջ հասարակության վրա: Օրինակ՝ ամեն տարի արտադրված ողջ սննդի մոտ մեկ երրորդը՝ 1 տրլն դոլար արժողությամբ - 1,3 մլրդ տոննային համարժեք, ոչնչանում է՝ փտելով սպառողների կամ վաճառողների ամբարներում կամ փչանալով վատ տեղափոխման ու բերքահավաքի վատ աշխատատեղանակների պատճառով. ինդիր, որը գործարարները պետք է լուծեն:

Ինչ վերաբերում է սպառողներին, ապա տնային տնտեսությունները սպառում են համաշխարհային էներգիայի մոտ 29%-ը և հարուցում ածխաթթու գազի արտանետումների 21%-ը: Այնուամենայնիվ, եթե ամբողջ աշխարհում մարդիկ օգտագործեն էներգախնայող լամպեր, աշխարհը տարեկան կխնայի 120 մլրդ ԱՄՆ դոլար: Ջրի աղտոտումը նույնպես կայուն լուծում պահանջող հրատապ խնդիր է: Մենք ավելի արագ ենք աղտոտում ջուրը, քան բնությունը կարող է վերաշրջանառել և մաքրել ջուրը գետերում և լճերում:

Ինչպե՞ս կարող եմ օգնել որպես գործարար

Գործարարների շահերի ոլորտում է գտնել նոր լուծումներ, որոնք հնարավորություն կտան ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ: Անհրաժեշտ է ավելի լավ հասկանալ ապրանքների և ծառայությունների բնապահպանական ու սոցիալական ազդեցությունը՝ և՛ ապրանքի կենսափուլերի առումով, և՛ առօրյա կյանքում դրանց օգտագործման ազդեցության: Կարևոր քայլերից է «թեժ կետերի» հայտնաբերումը արժեշղթայում, որտեղ միջամտություններն ունեն համակարգի՝ որպես ամբողջության բնապահպանական և սոցիալական ազդեցությունը բարելավելու ամենամեծ ներուժը: Բիզնեսները կարող են նաև օգտագործել իրենց նորարարական ուժը՝ մշակելու լուծումներ, որոնք անհատներին թե՛ հնարավորություն կտան, թե՛ կոգեչնչեն վարելու ավելի կայուն կենսակերպ՝ կրճատելով ազդեցությունը և բարելավելով բարեկեցությունը:

Ինչպե՞ս կարող եմ օգնել որպես սպառող

Գոյություն ունեն աջակցության երկու հիմնական ուղիներ. 1. կրճատել վատնումը և 2. մտածել՝ ինչ ես գնում և հնարավորության դեպքում ընտրել կայուն տարբերակը:

Վատնումը կարելի է կրճատել մի քանի միջոցներով՝ սնունդը դեռ չնետելուց մինչև պլաստիկ իրերի սպառման կրճատումը, որոնք օվկիանոսի հիմնական աղտոտիչներից են: Վերամշակված տոպրակ կրելը, պլաստիկ իրերի օգտագործումից հրաժարվելը, պլաստիկ շշերի վերամշակումը ամենօրյա ներդրում կատարելու լավ եղանակներ են: Տեղեկացված գնումներ կատարելը նույնպես օգնում է: Օրինակ՝ այսօր տեքստիլ արդյունաբերությունը մաքուր ջրի երկրորդ ամենամեծ աղտոտողն է գյուղատնտեսությունից հետո, և զարգացող աշխարհում նորածնության շատ ընկերություններ շահագործում են տեքստիլ ոլորտի աշխատողներին: Եթե դու կարող ես գնել կայուն և տեղական աղբյուրներից, դու կարող ես նպաստել իրավիճակի փոփոխությանը, ինչպես նաև ճնշում գործադրել գործարարների վրա՝ որդեգրելու կայուն աշխատատեղանակներ:

Եթե ուզում եք ավելին իմանալ, թե ինչպես կարող եք փոխել իրավիճակը, խնդրում ենք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment/takeaction>